ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2014 թվական N 81-Ա

ք.Հրազդան

ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման 58-րդ կետի և հիմք ընդունելով «Ատլանտ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2014 թվականի փետրվարի 28-ի գրությունը՝ ***որոշում եմ***.

1. Դադարեցնել «Ատլանտ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված Հրազդան-Ծաղկաձոր միկրոավտոբուսային երթուղու սպասարկման պայմանագիրը և հայտարարել նոր մրցույթ:

2. Մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը՝ Հրազդան-Ծաղկաձոր միկրոավտոբուսային երթուղին հանձնել «Դուստր Անի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ժամանակավոր սպասարկմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ